

ԿՆՆԴՉԻՄ

Posted on July 26, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Յարուբ Տէր Դաւիթեան, Մասիս Շաբաթաթերթ, Լոս Անճելըս, 26 Յուլիս 2011

✘ Այս տարուան առաջին չորս ամիսներու ընթացքին Հայաստանէն 47 հազար մարդ արտագաղթած է: Հայաստանի անկախութիւնէն ի վեր, երկրի բնակչութեան առնուազն մեկ երրորդը արտագաղթած է:

Ինչպէ՞ս կարելի է հանդարտ մնալ այս ԱՀԱԲՈՐ պատկերին առջեւ, որ արիւնաքամ կ'ընէ մեզ: Ինչպէ՞ս կարելի է չտագնաապիլ ու բարձրաձայն չբողոքել բոլոր անոնց դէմ, որոնք կը հիւժեն մեր ազգը: Ինչպիսի՞ մտայնութեան տէր մարդիկ են ղեկավար դիրքերու վրայ գտնուողները, որոնց գործունեութեան արդիւնքն է այս աղետալի իրավիճակը: Կը դժուարանանք հասկնալ, որ ինչպէ՞ս հայ մարդ մը կրնայ այդքան պարպուիլ հայկականութիւնէ, որ դաւէ իր ազգին դէմ: Հայկական անշահախնդիր գերագոյն ատեան մը, փաստարկելով անոնց ազգավնաս գործերը, շատոնց մահուան դատապարտած կ'ըլլար բոլորը, որոնք մահուան դուռը կը հասցնեն հայ ազգը, ի շահ իրենց քսակներու պարարտացման:

Յարուբ Տէր Դաւիթեան, Մասիս Շաբաթաթերթ, Լոս Անճելըս, 26 Յուլիս 2011

✘ Այս տարուան առաջին չորս ամիսներու ընթացքին Հայաստանէն 47 հազար մարդ արտագաղթած է: Հայաստանի անկախութիւնէն ի վեր, երկրի բնակչութեան առնուազն մեկ երրորդը արտագաղթած է:

Ինչպէ՞ս կարելի է հանդարտ մնալ այս ԱՀԱԲՈՐ պատկերին առջեւ, որ արիւնաքամ կ'ընէ մեզ: Ինչպէ՞ս կարելի է չտագնաապիլ ու բարձրաձայն չբողոքել բոլոր անոնց դէմ, որոնք կը հիւժեն մեր ազգը: Ինչպիսի՞ մտայնութեան տէր մարդիկ են ղեկավար դիրքերու վրայ գտնուողները, որոնց գործունեութեան արդիւնքն է այս աղետալի իրավիճակը: Կը դժուարանանք հասկնալ, որ ինչպէ՞ս հայ մարդ մը կրնայ այդքան պարպուիլ հայկականութիւնէ, որ դաւէ իր ազգին դէմ: Հայկական անշահախնդիր գերագոյն ատեան մը, փաստարկելով անոնց ազգավնաս գործերը, շատոնց մահուան դատապարտած կ'ըլլար բոլորը, որոնք մահուան դուռը կը հասցնեն հայ ազգը, ի շահ իրենց քսակներու պարարտացման:

Հայկական Յեղասպանութիւնէն վերապրողի զաւակ, Սփիւռքի մէջ ծնած, հայեցի դաստիարակութիւն ստացած ու միջին տարիքի հասած տողերս գրողի համար անընդունելի է տեսնել հայրենիքի հիւժումը: Այն հայրենիքին՝ որուն պատկանելիութեան գիտակցութիւնը եւ որու պատմութիւնն ու մշակոյթը կը կազմեն իր ինքնութիւնը: Մարդ ինչպէ՞ս կրնայ հանդուրժել իր ինքնութեան, իր ապագայ սերունդներու գոյութեան սպառնացող վտանգներուն, առանց ընդվզելու անոնց դէմ:

Հետեւաբար՝

- Կ'ընդվզիմ Հայաստանի թէ Սփիւռքի բոլոր այն կամակոր ղեկավարներուն դէմ, որոնք իրենց անձնական շահերուն հետամուտ, կը վնասեն մեր ազգի ընդհանրական շահերուն:
- Կ'ընդվզիմ Հայաստանի քաղաքական իշխանաւորներուն դէմ, որոնք Հայաստանի հայաթափման գլխաւոր պատասխանատուներն են, սկսելով նախագահական աթոռը ընտրակեղծիքներով գրաւածներէն:
- Կ'ընդվզիմ գիրք ու գիտութիւն արհամարհող Ազգային Ժողովի ամբարտաւան պատգամաւորներուն դէմ:
- Կ'ընդվզիմ Հայաստանի թէ Սփիւռքի այն բարոյագուրկ կրօնականներուն դէմ, որոնք գլխաւոր պատասխանատուներն են Ժողովուրդի մէջ հաւատքի անկման:
- Կ'ընդվզիմ Հայաստանի կրթութեան եւ մշակոյթի ոլորտի ղեկավարութեանց դէմ, որոնք գլխաւոր պատասխանատուներն են Ժողովուրդի մէջ "ոգու սով"ի տարածման:
- Կ'ընդվզիմ արդարադատութեան պաշտօնին կոչուած, բայց արդարութիւնը ոտնակոխող ու պատուէր կատարող իրաւական մարմիններուն դէմ:
- Կ'ընդվզիմ զինուորական բարձր կոչումի անարժանաբար հասած անարի եւ պարծենկոտ չարաշահներուն դէմ:
- Կ'ընդվզիմ իրենց բարձր պաշտօնները անպատուող, անարժան ու պատեհապաշտ պաշտօնատարներուն դէմ:
- Կ'ընդվզիմ «Հայաստան-Սփիւռք», «Արի Տուն» եւ նման ցուցադրական թատրոններու կեղծաւոր բեմադրիչներուն դէմ:
- Կ'ընդվզիմ իր համեստ հօտը Պենթիոնով եւ ատրճանակով առաջնորդող սնափառ կղերին դէմ:
- Կ'ընդվզիմ հայրենի հողի մշակութեամբ ու հայրենաբնակ հողագործի քրտինքով աճած ցորենի հունձքը այրել սպառնացող հացահատիկ ներկրող օլիկարիսին դէմ:
- Կ'ընդվզիմ, որովհետեւ չ'ընդվզիլ կը նշանակէ համակերպիլ աղետներու եւ կործանման տանող այս անընդունելի իրավիճակին հետ:

Անոնք որոնք իրավիճակը չալեկոծելու զգուշութեան կոչեր կ'ուղղեն մեզի, անոնց կը պատասխանենք, թէ հայրենասիրութիւնն է լռել դէպի անկում ընթացող նաւին ի տես: Անոնք որոնք ահազանգ հնչեցնողներուն կ'առաջարկեն Հայաստան երթալ եւ հոն գործել, անոնց կը յիշեցնենք լուսահոգի Հրանդ Տիկիւնի սրտցաւ խօսքերը. «Եթէ երթ մը կայ, ապա ու՞ր երթալ: Հայաստա՞ն: Ինձի նման անձ մը, որ կը պայքարի անարդարութեանց դէմ, մինչեւ ե՞րբ կրնար տանիլ այդտեղի անարդարութիւնները: Արդե՞ք հոն աւելի ծանր խնդիրներու մէջ պիտի չ'իյնայի»:

Սփիւռքեան կառոյցներու ղեկավարները եւ մտաւորականութիւնը, որոնք ենթակայ չեն Հայաստանի իշխանութեանց տիրապետութեան, պէտք է քաջութիւնն ու վեհանձնութիւնը ունենան ահազանգելու հոն տիրող անարդարութեանց ու համարձակօրէն արտայայտելու իրենց ընդվզումը Սփիւռք այցելող հայրենի

ղեկավարներուն: Բայց եթէ անոնք ալ կերակրատաշտեն օգտուելու, շքանշաններու եւ կամ ինքնասիրութեան շոյանքներու ակնկալութիւններով պիտի շարժին, ապա անոնք կրկնակիօրէն պատասխանատու են ազգին ու հայրենիքին իրենց մատուցած ողորմելի եւ վնասակար ծառայութեան համար:

Անոնք որոնք մեզի կը մխիթարեն թէ հայ ժողովուրդը Լենկթիմուրեան ջարդարարներէն մինչեւ Եղեռն ճաշակած ու վերապրած ժողովուրդ է, անոնց կը պատասխանենք, որ մեր հայեացքները փոխանակ անդունդները յառելու, բարձրացնենք վե՛ր, որպէս զի վերակերտենք այն փառքի օրերը, որուն արժանի է մեր հինաւուրց ազգը:

